

40 հազարի մօտ Հայ-Հռոմէականներուն համար իրենց մայրենի լեզուն և եկեղեցական ինքնուրոյն ծէսերուն ծանօթ Հայ-Կաթոլիկ եկեղեցականներ պաշտօնի կոչուին: Տ. Ֆրանքոյ եպիսկոպոս հաւատարմ է, թէ Մաճառ կառավարութիւնը արդէն շատ թոյլատու ընթացք մը կը բռնէ այդ կարգի խնդիրներու մասին, և խոստացած է իր վերագործին անոր բաղձանքները կատարել: Հունգարիոյ Հայ-Կաթոլիկներու հովիւ նշանակուած է Թորպաճեան վարդապետ:

— Անտիոքի շրջականները Ղընիէ անուն գիւղին մէջ 30 տարէ առաջ Լատին կրօնաւորներ մուտ գտնելով կը յաջողին գիւղին 126 տուն հայերը լատինացնել, շինք տուն սակայն հաւատարիմ կը մնան իրենց եկեղեցիին տարիներէ ի վեր յամառօրէն կը պաշտպանեն իրենցն սեփականութիւնը Լատիններու կողմէ անիրաւարար գրաւումի փորձերու դէմ: Վերջերս Հալէպի մէջ այդ սեփականութեան դատը տեսնուելով՝ ի նպաստ հայերուն վճիռ տրուած է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ՓԱՐԻԶՈՒՄ

Ս. Էջմիածնի միաբան հ. Կոմիտաս վարդապետը Փարիզի «Salle. des Agriculteurs» ում և «l'Ecol d'Art» ում տուել է Հայկական համերգ, մի քանի սիրողների մասնակցութեամբ: Գաղղիական՝ յատկապէս մասնագիտական երաժշտական երկշաբաթերթերը «Le Courrier Musical» № 24, «Le Mercure Musical» № 23—24, «Le Monde Musical» № 23 և «L' Auror» օրաթերթը իրենց դեկ. 21-ի համարում հիացմամբ են խօսում այն համերգների մասին: Խօսք չեն գտնում գովելու Հայոց պատարագի արարողութեան եղանակների քաղցրութիւնը, վեհութիւնը և ներդաշնակութիւնը: Մենք թարգմանաբար դնում ենք ներքևում թերթերից այն հատուածները, որ յիշեալ համերգներին են վերաբերում: Բացի Կոմիտաս վարդապետից մասնակցութիւն են ունեցել օրիորդ Շուշիկ և Մարգարիտ Բաբայեանները և պ. պ. Մուղունեան, Շահ-

Մուրադեան երգել և նուագել են. իսկ պ. Չորանեան մի գեղեցիկ դասախօսութեամբ ծանօթացրել է ժողովականներին Հայոց բանահիւսութեան հետ: Բոլոր մասնակցողները իրենց շնորհալի երգերով և նուագով հիացրել են հանդիսականներին և իրենց մայրենի երկրի հանճարը փայլեցրել: Դենեք այստեղ բանիմաց և երաժշտական արուեստին տեղեակ անձանց կարծիքը:

Le Monde Musical Հայկական երաժշտութիւն—Ահա մի նորութիւն, մի յայտնութիւն, որ մեզ տանում է հեռու և ապրել է տալիս մի մոռացուած ժողովրդի կեանքով: Հարկաւոր կլինէր Բուրգուտ Դիւգուդրէի լեզուն, որ հնարաւոր լինէր տալ մի գաղափար այն ժողովրդեան և եկեղեցու երգերի մասին, որ հ. Կոմիտասը բերել է մեզ Հայաստանից: Եւ միթէ դեռ չի տեսնում մարդ այն երկար սեւ ուրուականի կիսագէմքը, որի բարձր վեղարը աւելի երկարացնում էր նորա ստուերը, դեռ չէն զգում այն երգերի խորհրդաւորութիւնը, այն քաղցր մեկամազձութիւնը, այն հնչիւն ճոխութիւնը, որ մաղթում են Ամենակարողին կամ գովում բնութեան գեղեցկութիւնը, սիրելի «հովը», «դրան խնկի ծառը», «բարերար անձրեւը», «սիրելի եղը», «իմ եղբայր»ը կամ այն պարերի անդիմադրելի ոյժը . . . :

Le Corrier Musical Հայկական Համերգ—Քաղցրութիւնը որքան ուժգին էր, նոյնչափ էլ առանձնայատուկ այն ժողովրդական երաժշտութեան, որ մեր առաջ բաց արաւ «Salle Agriculteurs»ում բաղմաթիւ և ընտիր հատուածներով: Այս համերգը տեղի ունեցաւ Դեր. հ. Կոմիտասի շնորհիւ և աշխատութեամբ, կիրթ երաժշտագէտ և եռանդուն քարոզիչ իւր ազգի բնական արուեստի:

Պ. Չորանեան մի հետաքրքիր բանախօսութեամբ ըստ պատշաճի գովեց Հայոց բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը ինչպէս և հ. Կոմիտասի անդուլ եռանդը: Յետոյ լսեցինք փոփոխակի սիրոյ, աշխատանքի, պանդխտութեան և կրօնական երգեր խմբով կամ մենաձայն, անչափ գրա-

ւիշ, որոնցից մեծ մասը կրկնուեցան . . . Հ. Կոմիտասը, իւր այս երաժշտական երեկոյթի հոգին, աննման էր պատարագի արարողութեան երգերում:

Le Mercure Musical Հայկական երաժշտութիւն — Ժողովրդական և կրօնական Հայկական համերգ և երաժշտութիւն Արժ. Հ. Կոմիտասի ղեկավարութեամբ ի 1-ն դեկտեմբերի 1906 թ. երկրագործական ընկերութեան դահլիճում:

Այն մեղեդին, որ մեր նախորդ տետրակում հրատարակել էինք և պ. Զորանեանի պերճախօս ատենաբանութիւնը բարձր գովեստի արժանի են կացուցանում Հայկական երաժշտութիւնը. և ինձ չափազանցութեան մէջ ընկած չեն համարիլ, եթէ ասեմ, որ այս համերգը մի յայտնութիւն, մի սքանչանք էր: Ես կարծում եմ, մեղանից ոչ ոք չի կասկածում այն արուեստի գեղեցկութեան վերայ, որ իսկապէս ոչ ևրօպական է և ոչ արևելեան, բայց եղակի ընաւորութիւն ունի իւր շնորհալի քաղցրութեամբ թափանցող և յուզիչ ազնիւ քնքշութեամբ:

Այս մեղեդիները քնքոյշ ել և էջներով և ընտիր, ճկուն ու կենդանի ութմով մի երաժշտութիւն են, որ ըզխում է ամբողջովին սրտից և հոսում ինչպէս մի թարմ ջուր, վճիտ և լուսաւոր: Այս երգերը արեգակ ունին. ոչ կիզիչ արևը Արաբիայի կամ Պարսկաստանի անապատների, այլ ոսկեղօծ պարզութեամբ, ամբողջովին երկնային, որի ջերմութիւնը մի գգուանք է ձիւնադատ լեռանց դադաթների, սաղարթագեղ անտառի և խխոչացող վտակաց փայլուն թերևս սխալ չլինէր ոմանց կարծելը, թէ երկրաւոր դրախտը Հայաստանում: Արարատ լեռան ստորոտին էր, որովհետև այն աշխարհը, որի պատմութիւնը այնքան չարաբաստիկ եղաւ, իրօք ընտրեալ երկիր է, ուր արգաւանդ և բարեբեր բնութիւնը բաշխում է մարդուն ամէն տեսակ բարիք:

Մի տեական հովերգութիւն անդորր և քաղցր, ժպտուն, այդ պիտի լինէր և այդ եղաւ յիշուի Հայաս-

տանի հովիտների կեանքը՝ չնայած այն բոլոր չարեաց, որ ակօսեցին այդ աշխարհը:

Մարգկանց հոգին էլ արժանի մնաց այդ բաղդաւոր երկրին: Նա պահել է իւր խորքում բնական պարզութիւնը, բարութիւնը, վստահութիւնը և կեանքի ու լուսոյ սէրը: Եւ այս առաքինութեանց թանկագին գանձը, որ ոչ թիւրքը, ոչ քուրդը և ոչ Ռուսը չկարողացան ոչ թաղել, ոչ էլ խլել, այսօր մեզ հաղորդուեցաւ սիրոյ երգերի մի չքնաղ շարքով, վառ, անուշաբոյր ծաղիկներ: Այս սիրոյ երգերն են մեղամաղձիկ և խանդակաթ ինչպէս և ամբողջ աշխարհում, բայց մի առանձին նուրբ երանգով, քնքոյշ յոյգերով:

Աշխատանքը երգերը երկարագոյ մի աղաղակ են, հարուստ գեղգեղանքով, որ արձագանք է տալիս մի լեռնից միւսը և ի գործ շարժում «աղբէր ջան եղին», երկրագործ հայի մտերիմ խորհրդակցին:

Դարձեալ ողբը, որով գեղում, թափում է ազատօրէն անտիրութեան և պանդխտի ամբողջ թախիժը. բայց խառը չէ ոչ գանգաւ և ոչ ըմբոստութիւն:

Պաշտամանց (պատարագի) երգերը նոյնպէս բոլորովին ազգային ժողովրդական, չունին ամենեին այն երկչոտ յարգանքը, որ կասեցնում են նոյն իսկ յուսոյ և վստահութեան ժամերին: Սղբա հոգու գեղմունքներ են, որ բաց են անում ամբողջովին իւր Աստուծոյ առաջ և Նորան մատուցանում սիրոյ ամբողջ թափով իւր բոլոր խորհուրդները և իւր կեանքը բոլորանուէր: Մարգ զգում է ջերմ խորհրդաւոր հաւատի թրթռալը, որ առանց ջանքի հիացմանց կատարներն է հասնում:

Վերջապէս պարերի եղանակը չունին մերօնց արտօրանքը, ոչ էլ մեր չափի կոշտութիւնը, երբեմն վեհ և կրօնական, երբեմն մեղմ, ինչպէս սիրոյ երգ, երբեմն թեթեւ և անմեղ ուրախութեամբ, բայց խորապէս հմայիչ... գեղեցիկ մարմինների ճշմարիտ երաժշտութիւն, ներդաշնակ և ազատ:

Համերգում այս պարի երգերը միայն լսեցինք, պա-

բերը չտեսանք, սակայն օր, նուշիկ Բաբայեանի կնոջ օգնու-
 դաշնակով մեզ պատկերացնել ազգային նուագարանների
 սուր կամ անորոշ ձայներն և անապատ պահել յուզիչ
 շեշտերի շնորհալիութիւնը, զգացուում էր, որ նուագողի
 հոգու առաջ ոչ թէ երաժշտական խաղերն են անցնում, այլ
 թէ նա հետեւում էր պարին, մենք էլ նորա հետ: Մենք
 տեսնում էինք երկար շարքի տարուբերուիլը, անվերջ
 շրջապարի նախերգանքը, ուր միացած երիտասարդ և
 ծեր, ամբողջ մի ժողովուրդ, երիտասարդների և օրիորդ-
 ների ժպտուն երևակայութիւնը, թեթև ստիւնները,
 պտոյտքը, դիւրաշարժ բազուկներ, որ բարձրանում և
 ծփում, նման զեփիւսի շոյուղ սաղարթի... Աքանջելի
 երկիր, ուր պարը իւր բնական լեզուն ունի, ուր ամէն ոք
 անձնատուր է լինում գեղեցիկ երեկոյի ներշնչման և
 փոխարկուում է կամ ցնծութեան, կամ վշտի, կամ փա-
 փազի...

Օր, Մարգարիտ Բաբայեանի և պ. պ. Մուղունեանի և
 Շամուրադեանի մատին խօսելուց յետոյ՝ անցնում է հ.
 Կոմիտասին:

Հ. Կոմիտասը, որ չէր վախեցել գալ և զեկամարել
 խումբը և երգել պաշտամանց մեղեդիներ, մեր «Stabat
 Mater»-ի համապատասխան կտորի մէջ հասաւ մի այնպիսի
 յուզմունքի ուժգնութեան, որ համարեա արտասուեցինք,
 և արժ. հ. Կոմիտասը արժանացաւ ուխտիայի:

Ոչինչ աւելի ազդու չեն, քան իւր մեծ ու վեղարով
 քաղցրութեամբ և արժանաւորութեամբ խոնարհուիլը և
 կրկին երգեհոնի առաջ նստելը և վերջին տողի վերսկսելը,
 որը երգեց համարեա անձայն, ուր լսուում էր մեծ վշտի
 գաղտնիքը, մի երկրատարած սրգահատանքի շեշտով,
 ամփոփուած վեհութեամբ, որ Աստուածային ներկայու-
 թիւն է ազդում հոգուն:

Քիչ անգամ մարդ տեսած կլինի մի դահլիճ այդ-
 պէս լեցուն (շատերը տեղ չլինելու պատճառով մերժումն
 ստացան) և այսպէս ոգևորուած: Արժանապատիւ հ. Կո-
 միտասը, որին պատկանում է այս եղանակների հաւա-

քելու և առաջին անգամ նրանց գեղեցկութիւնը ճանաչելու պատիւը, մի հանճարեղ, շնորհալի երաժշտագէտ է. սրովհետեւ այդ երգերից շատերը յարմարացրել է երգեհոնի կամ խմբերգի, ուր ցոյց է տալիս շատ ճիշտ և նուրբ ըմբռնումն՝ պահելով ազգային առանձնայատկութիւնը և երանգը:

Ա. Յարութիւնեան.

ԳՐԱԽՈՍՈՍՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կառլ Մենդելսոնն Բարբուրու Պատմութիւն Յունաստանի Ալի փաշա և Հետերիա. թարգմ. Ստեփան Կանայեանց, Վաղարշապատ, 1906 թ., դինն է 75 կ.:

Պարոն Կանայեանցը ճաշակ և ընտրութեան շնորհք է ցոյց տուել այսպիսի մի գեղեցիկ և մեր կեանքին համապատասխան բովանդակութիւն ունեցող երկի թարգմանութեամբ. ցանկ կարող ենք միայն, որ գրքի ամբողջական թարգմանութիւնը չունինք մեր առաջ, այլ Ա. հատորի (ամբողջը բաղկացած է երկու հատորից) երկրորդ գիրքը միայն. յուսանք, թէ թարգմանիչը կաշխատէ ըստ կարելւոյն շուտ նոյն աշխատութեան մնացած գրքերն էլ հրատարակել, որով հայ ընթերցող և յատկապէս երիտասարդ հասարակութեան գնահատելի ծառայութիւն արած կլինի:

Այս գիրքը նկարագրում է միայն յուսաց ապստամբութեան մի շրջանը՝ այն է Ալի փաշայի և Հետերիայի (ընկերութիւն) հանդէս գալը և այդ երկու երեւոյթների